



ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS

1.1 (31)

Естественные и физико-математические науки
(География и геология, биология, математика и механика, физика и
радиофизика)

Natural and Physical-Mathematical Sciences
(Geography and Geology, Biology, Mathematics and Mechanics, Physics and
Radiophysics)

ЕРЕВАН - YEREVAN
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS
2020

ԵՊՀ ՈՒԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈՂՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

1.1 (31)

Բնական և ֆիզիկամաթեմատիկական գիտություններ
(Աշխարհագրություն և երկրաբանություն, կենսաբանություն, մաթեմատիկա և
մեխանիկա, ֆիզիկա և ռադիոֆիզիկա)

Հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
Издаётся по решению Ученого совета ЕГУ
Published by the resolution of the Academic Council of YSU

Խմբագրական խորհուրդ՝

ա.գ.դ., պրոֆ. Թ. Վարդանյան
ֆ.մ.գ.դ., պրոֆ. Ռ. Ալավերդյան
ֆ.բ.գ.դ., դոց. Ա. Բալաբեկյան
ֆ.մ.գ.դ., դոց. Ե. Մամասախլիսով
ֆ.մ.գ.դ., դոց. Տ. Հակոբյան
ա.գ.թ., դոց. Ս. Սուվարյան
ա.գ.թ., դոց. Գ. Ալեքսանյան
ե.գ.թ., դոց. Մ. Գրիգորյան
կ.գ.թ., դոց. Լ. Փանոսյան
տ.գ.թ., դոց. Հ. Հարոյան
ֆ.մ.գ.թ., դոց. Ս. Մխիթարյան
ք.գ.թ., դոց. Ի. Ալեքսանյան
ք.գ.թ., դոց. Ա. Մարտիրյան
ֆ.մ.գ.թ., ասիստ. Ա. Մանասելյան
ֆ.մ.գ.թ., ասիստ. Ա. Վարդանյան
ֆ.մ.գ.թ. Ս. Ալեքսանյան
ֆ.մ.գ.թ. Տ. Աբրահամյան

Редакционная коллегия:

д.г.н., проф. Т. Варданян
д.ф.м.н., проф. Р. Алавердян
д.ф.м.н., доц. А. Балабекян
д.ф.м.н., доц. Е. Мамасакхлисов
д.ф.м.н., доц. Т. Акобян
к.г.н., доц. С. Суварян
к.г.н., доц. Г. Алексанян
к.г.н., доц. М. Григорян
к.б.н., доц. О. Паносян
к.т.н., доц. О. Ароян
к.ф.м.н., доц. С. Мхитарян
к.х.н., доц. И. Алексанян
к.х.н., доц. А. Мартирян
к.ф.м.н., ассист. А. Манаселян
к.ф.м.н., ассист. А. Варданян
к.ф.м.н. М. Алексанян
к.ф.м.н. Т. Абрамян

Editorial Board

DSc, Prof. T. Vardanyan
DSc, Prof. R. Alaverdyan
DSc, Associate Prof. A. Balabekyan
DSc, Associate Prof. Y. Mamasakhlisov
DSc, Associate Prof. T. Hakobyan
PhD, Associate Prof. S. Suvaryan
PhD, Associate Prof. G. Aleksanyan
PhD, Associate Prof. M. Grigoryan
PhD, Associate Prof. L. Panosyan
PhD, Associate Prof. H. Haroyan
PhD, Associate Prof. S. Mkhitaryan
PhD, Associate Prof. I. Aleksanyan
PhD, Associate Prof. A. Martiryan
PhD, Assistant A. Manaselyan
PhD, Assistant A. Vardanyan
PhD M. Aleksanyan
PhD T. Abrahamyan

Հրատարակիչ՝ ԵՊՀ հրատարակչություն
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 10) 55 55 70, publishing@ysu.am

Հրատարակչության նախապատրաստող ստորաբաժանում՝ ԵՊՀ ՈԻԳԸ

Հարությունյան Դիանա

ԵՊՀ, Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ, բակալավր
Գիատական դեկավար՝ ա.գ.թ.,ասիստ.Գ. ՂամբարյանԷլ. փոստ՝
dianaharutyunyan1309@gmail.com

ՀԱՅԱՍՏԱՆԻ, ԱՂԲԵՋԱՆԻ, ՎՐԱՍՏԱՆԻ ԶԲՈՄԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Համաշխարհային տնտեսության մեջ այժմ զբոսաշրջությունը համարվում է ամենափոփոխվող, շարժուն և շահութաբեր ոլորտներից մեկը, որն իր արագ զարգացման տեմպերով մեծ հնարավորություններ է ստեղծում երկրների ազգային տնտեսության տարբեր ճյուղերի և, մասնավորապես, զբոսաշրջային ինդուստրիաի զարգացման համար:

Միջազգային զբոսաշրջությունը սկսել է զարգանալ XIX դարի կեսերից և զանգվածային դարձել XX-րդ դարի կեսերին:

Զբոսաշրջությունը ազատ ժամանակ մարդկանց ժամանակավոր տեղաշարժն է մշտական բնակության վայրից դեպի այլ վայր՝ հանգստի, առողջության վերականգնման, ճանաչողական, կրոնական, գործնական և այլ նպատակներով՝ առանց այցելության վայրում վճարովի աշխատանքով զբաղվելու:

Սա գործարարության ոլորտ է, որը բավարարում է զբոսաշրջիկի պահանջմունքները և նշանակալի ֆինանսական մուտքերով է ապահովում երկրների ազգային տնտեսություններին: Զբոսաշրջությունը հզոր խթան է տնտեսությունների բազմատեսականացման և զարգացման համար: Որոշ երկրների ազգային եկամտի 70-80 %-ը ստացվում է զբոսաշրջությունից:

Զբոսաշրջության դերի և զարգացման տեմպերի մասին է վկայում վիճակագրությունը: 2017 թ.-ին միջազգային զբոսաշրջային ժամանումների թիվը կազմել է՝ 1.326 միլիարդ մարդ, որը 2016 թ.-ի համեմատ գրանցել է 7 % աճ՝ ավելանալով 86 միլիոնով: Միջազգային զբոսաշրջության ընդհանուր ֆինանսական մուտքերը 2016 թ.-ին կազմել են 1.245 միլիարդ դոլար, իսկ 2017 թ.-ին՝ 1.340 մլրդ դոլար և 2016 թ. համեմատ գրանցել 4.9 % աճ:

2017 թ. զբոսաշրջային ճանապարհորդությունների 57 %-ը եղել է օդային հաղորդակցմամբ, 37 %-ը՝ ավտոճանապարհային, 4 %-ը՝ ջրային, 2 %-ը՝ երկաթուղային: 2017 թ. միջազգային զբոսաշրջիկների 55 %-ի ճանապարհորդության նպատակը եղել է հանգիստը և ժամանցը, 27 %-ը ճանապարհորդել է հարազատ-ներին այցելության,

առողջական, կրոնական նպատակներով, 13 %-ը՝ գործնական և 6 %-ը՝ այլ նպատակներով:

2017 թ. Եվրոպայի տարածաշրջան էայցելել միջազգային զբոսաշրջային ժամանումների (այսուհետ՝ զբոսաշրջիկ) ընդհանուր թվի շուրջ 51 %-ը, Ասիա և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջան՝ 24 %, Ամերիկա՝ 16 %, Աֆրիկա՝ 5 %, Մերձավոր Արևելք՝ 4 %: Զբոսաշրջիկների թվի առավել մեծ աճի տեմպեր գրանցվել են Եվրոպա և Աֆրիկա տարածաշրջաններում՝ շուրջ 8.5 %, ամբողջ աշխարհում՝ 7 %:

2017 թ. առավել շատ զբոսաշրջիկներ ընդունել է Ֆրանսիան՝ 86.9 մլն, Իսպանիան՝ 81.8 մլն և ԱՄՆ-ն՝ 76.9 մլն, իսկ գլխավոր տասնյակում այս երկրներին հաջորդում են համապատասխանաբար՝ Չինաստանը՝ 60.7 մլն, Իտալիան՝ 58.3 մլն, Մեքսիկան՝ 39.9 մլն, Մեծ Բրիտանիան՝ 37.7 մլն, Թուրքիան՝ 37.6 մլն, Գերմանիան՝ 37.5 մլն և Թաիլանդը՝ 35.4 մլն զբոսաշրջիկներով:

Զբոսաշրջությունից ստացած ֆինանսական մուտքերը Եվրոպայի տարածաշրջանում կազմել են ողջ մուտքերի 39 %-ը, Ասիա և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջան՝ 29%, Ամերիկա՝ 24 % Աֆրիկա՝ 3 %, Մերձավոր Արևելք՝ 5 %:


Զբոսաշրջությունից ստացած ֆինանսական մուտքերով առաջատար է ԱՄՆ-ն (210.7 մլրդ), այնուհետև Իսպանիան և Ֆրանսիան (համապատասխանաբար՝ 68 և 60.7 մլրդ դոլար): Այս երեք երկրներից հետո, հաջորդականությամբ գլխավոր տասնյակում են նաև Թաիլանդը՝ 57.5 մլրդ, Մեծ Բրիտանիան՝ 51.2 մլրդ, Իտալիան՝ 44.2 մլրդ, Ավստրալիան՝ 41.7 մլրդ, Գերմանիան՝ 39.8 մլրդ, Մակաոն (Չինաստան)՝ 35.6 մլրդ և Ճապոնիան՝ 34.1 մլրդ ԱՄՆ դոլար եկամուտներով:

2017 թ. զբոսաշրջության ուղղակի ներդրումը համաշխարհային ՀՆԱ-ում կազմել է 2570.1 միլիարդ դոլար (ՀՆԱ-ի 3.2 %-ը), համախառն ներդրումը՝ 8272.3 միլիարդ դոլար (ՀՆԱ- 10.4 %-ը): Զբոսաշրջությունը ուղղակիորեն ապահովել է 118454 000 աշխատատեղ (ընդհանուր զբաղվածության 3.8 %-ը) [2]:

Անբաղաճնալով այս ցուցանիշներին, և ցույց տալով թե այժմ ինչ դեր ունի զբոսաշրջությունը աշխարհում՝ չենք կարող չանդրադառնալ մեր տարածաշրջանում, մասնավորապես՝ Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում նրա տեղի ու դեր մասին:

Ըստ զբոսաշրջության մրցունակության զեկույցի վերլուծական տվյալների՝ մրցունակության շարքում տարածաշրջանում առաջնային դիրքում է Վրաստանը, որը 70-րդ տեղում է, և, նախորդ տարվա համեմատ, բարելավվել է իր դիրքը 3.70 միավորով (մրցունակության շարքում՝ +1), ապա Ադրբեջանը՝ 71-րդ տեղում, աճ՝ +3.70 միավոր (մրցունակության շարքում՝ +13), Հայաստանը՝ 84-րդ տեղում, աճ՝ +3.53 միավոր (մրցունակության շարքում՝ +5) [1]:

Վերջին տարիներին զբոսաշրջությունն այս տարածաշրջանում հաստատուն տեմպերով աճում է, ինչի մասին է վկայում զբոսաշրջային այցելությունների թվի և դրանց շարժընթացի փոփոխությունների գծապատկերը (գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Միջազգային զբոսաշրջային ժամանումների թիվը Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում, մարդ

Երեք երկրներում էլ տեղի է ունեցել զբոսաշրջիկների թվի աճ, որը բնականաբար, նպաստել է և շարունակում է նպաստել այդ երկրների տնտեսության զարգացմանը, և նրանց դիրքի բարելավմանը՝ միջազգային զբոսաշրջության մեջ. այլ կերպ ասած, այն նպաստում է այդ երկրների հեղինակության բարձրացմանը միջազգային ասպարեզում, թեև, Ադրբեջանում ընդհակառակը՝ աճի հետ մեկտեղ, այնուհանդերձ, 4 դիրքով ետընթաց է գրանցել:

Իրավիճակը առավել հանգամանալից ներկայացնելու համար նշենք, որ Հայաստան 2010 թ.-ին այցելել է շուրջ 687 հազար զբոսաշրջիկ, Ադրբեջան՝ 1.280 մլն, Վրաստան՝ 1.067 մլն: 2017 թ.-ին զբոսաշրջիկների թիվը Հայաստանում կազմել է 1.495 միլիոն, Արբեջանում՝ 2.454 մլն, Վրաստանում՝ 3.479 մլն: Ինչպես փաստում են տվյալները, զբոսաշրջիկների թվի առավելագույն աճ գրանցվել է Վրաստանում, ուր զբոսաշրջիկների թիվը ավելի քան եռապատկվել է, այնինչ, Հայաստանում և Ադրբեջանում, դիտվող ժամանակահատվածում, միայն կրկնապատկվել են:

Վրաստանը, ընդհանրապես, մի երկիր է, նշում են մասնագետները, որտեղ գոյություն ունեն բարձր, շատ բարձր և ֆանտաստիկ ծանրաբեռնվածությամբ զբոսաշրջային սեզոններ, և դա ոչ միայն այն պատճառով, որ նա ավելի գրավիչ է կամ ունի ավելի բարենպաստ պայմաններ զբոսաշրջության համար: Ոչ, ուղղակի, ամբողջ գաղտնիքը նրանում է, որ զբոսաշրջային գովազդի շուկայում, որը ենթա-դրրում է նաև

տարատեսակ միջազգային ցուցահանդեսներին ներկայանալը: Վրաստանն ամենուր է: Հայաստան, Ադրբեջան, Վրաստան եռյակում զբոսաշրջիկ-ները ամենաքիչը ծանոթ են հենց Հայաստանին:


Տնտեսության ամենաշահութաբեր ճյուղերից մեկի՝ զբոսաշրջության զարգացմանը, ՀՀ կառավարությունը տարեկան տրամադրում է մոտ 200 հազար ԱՄՆ դոլարին համարժեք գումար: Այս նախադասությամբ կարելի էր ավարտված համարել քննարկումը, այն պարզ պատճառով, որ միայն արտաքին գովազդա-տեղեկատվական հարթակում երկիրը պատշաճ կերպով ներկայացնելու համար անհրաժեշտ է երկու-երեք անգամ ավելին, քանի որ, ինչպես սիրում էր կրկնել Լորդ Թոմաս Մակուլեյը՝ դեռ 19-րդ դարում, «*Փող աշխատել առանց գովազդի վրա փող ծախսելու, ի վիճակի է միայն դրամի տպագրության պալատը*»:

Այն, որ Հայաստանը գրավչության և զբոսաշրջայի ներուժի առումով արդարացիորեն չի զիջում հարևան երկրներին, և որ վերջին տարիներին զբոսաշրջիկների հոսքի աճ է գրանցվում, դա նույնպես փաստ է: Սակայն, դրա հետ մեկտեղ, փաստ է նաև այն, որ համաշխարհային զբոսաշրջության և ճամփորդության մրցակցության զեկույցում Հայաստանը դեռևս 70-րդ տեղում է՝ զիջելով հարևան երկրներին՝ Ադրբեջանին ու Վրաստանին, թեև քիչ տարբերությամբ, և նախկին տարիների համեմատությամբ զգալի առաջընթաց տեղաշարժերով: Փաստ է նաև այն, որի մասին միակարծիքորեն պնդում են զբոսաշրջային ոլորտի մասնագետները, որ ինչպիսին էլ լինեն զբոսաշրջային հոսքերին վերաբերող վիճակագրական թվերը, միևնույն է, «*Հայաստանը զբոսաշրջային շուկայում առաջին ջութակահարներից չէ*» [3]:

Զբոսաշրջությունը համարվում է աշխատատար ճյուղ, և, ուղղակիորեն կամ անուղղակիորեն, նպաստում է նաև գործազրկության նվազմանն ու աղքատության հաղթահարմանը: Այս ամենով պայմանավորված՝ զբոսաշրջությունը՝ զարգացող, այդ թվում նաև տարածաշրջանի երկրների համար, ձեռք է բերել ընդգծված սոցիալ-տնտեսական նշանակություն:

Ուշագրավ է այն, որ ՀՀ զբոսաշրջության զարգացման գործընթացում վճռորոշ դերակատարում ունի ոլորտի պետական կարգավորման քաղաքականությունը, և զարմանալի չէ, որ 2003 թ. «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքով ոլորտը հռչակվել է որպես տնտեսության գերակա ճյուղ [4]:

Տարածաշրջանի երեք երկրների զբոսաշրջությունից ստացած ֆինանսական մուտքերի՝ ծավալի և շարժընթացի փոփոխությունների մասին էլ, փաստում է հաջորդ գծապատկերը:



Գծապատկեր 2. Միջազգային զբոսաշրջային մուտքերը տարածաշրջանի երեք երկրներում, մլն դոլար


Ինչպես երևում է ներկայացված գծապատկերից, երեք երկրներում էլ տեղի է ունեցել զբոսաշրջային ոլորտից ստացվող ֆինանսական մուտքերի աճ, սակայն երեք երկրներից յուրաքանչյուրում տարբեր տեմպեր է գրանցվել: Հայաստանում 2010 թ. զբոսաշրջային ոլորտից ստացվել է շուրջ 646 մլն դոլար ֆինանսական մուտք, որը, աստիճանաբար, ոլորտի զարգացման և ինչպես նաև զբոսաշրջային հոսքերի ավելացման արդյունքում ավելացել է և 2016 թ.-ին կազմել է 968 մլն դոլար, իսկ 2017 թ.-ին՝ հասել է 1 միլիարդի սահմանն ու կազմել՝ 1.120 մլն դոլար: Պատկերը ամբողջությամբ փոխվում է Ադրբեջանում. Այստեղ, եթե զբոսաշրջային ոլորտից ստացված ֆինանսական մուտքերը 2010 թ.-ին կազմում էին 657 մլն դոլար, ապա 2016 թ.-ին այդ մուտքերը հասել են 2 միլիարդի սահմանը՝ կազմելով շուրջ 2.714 մլն, իսկ մեկ տարի անց՝ 2017 թ.-ին՝ 3.012 մլն դոլար: Ամբողջությամբ այլ իրավիճակ է Վրաստանում: 2010 թ. զբոսաշրջային ոլորտից ստացված մուտքերը այս երկրում կազմել են 659 մլն դոլար, 2016 թ.-ին՝ 2.166 մլն, իսկ 2017 թ.-ին՝ 2.751 մլն դոլար:

Համեմատության համար նշենք, որ եթե Ադրբեջան 2017 թ.-ին այցելել է 2.454 մլն զբոսաշրջիկ, և նա այդ տարում ստացել է 3.012 մլն դոլար մուտք, ապա 2017 թ.-ին Վրաստան է այցելել 3.479 մլն զբոսաշրջիկ և ստացել է ընդամենը 2.751 մլն դոլար մուտք: Նույնայդ թվականին Հայաստան այցելել է 1.495 միլիոն զբոսաշրջիկ, և ստացել՝ 1.120 մլն դոլար մուտք: Ստացվում է՝ Հայաստանում մեկ զբոսաշրջիկի հաշվով մուտքերը կազմում են 749 դոլար, Վրաստանում՝ 791 դոլար, Ադրբեջանում՝ 1227 դոլար: Դա հիմնականում պայմանավորված է նրանով, որ Վրաստանում զբոսաշրջային ոլորտում առաջարկվող գները ավելի մատչելի են, քան Ադրբեջանում:

ՄԱԿ-ի Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության զեկույցի համաձայն՝ Վրաստանը զբոսաշրջության զարգացման աշխարհի ամենաարագ աճ

գրանցողերկրներից, զբաղեցնում է չորրորդ հորիզոնականը համաշխարհային վարկանիշում, և երկրորդը՝ Եվրոպայում [5]:


Տարածաշրջանիերկրներում՝ զբոսաշրջության զարգացման մասին առավել ամբողջական պատկերացումկազմելու համար, հաշվարկելենք մեկ բնակչի հաշվով զբոսաշրջիկների թիվը (2017 թ.-ին երկիր այցելած զբոսաշրջիկների թիվի և երկրի բնակչության հարաբերությունը) և մեկ բնակչի հաշվով զբոսաշրջությունից ստացված ֆինանսական մուտքերը (2017 թ.-ին զբոսաշրջությունից ստացված ֆինանսական մուտքերի ծավալի և երկրի բնակչության հարաբերությունը): Այդ հաշվարկների հիման վրա ստացել ենք հետևյալ պատկերը:



Գծապատկեր 3. Մեկ բնակչի հաշվով զբոսաշրջային ժամանումներիթիվըտարածաշրջանի երեք երկրներում (զբոսաշրջիկ)

Գծապատկեր 3-ի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 2017 թ. տվյալներով Հայաստանում յուրաքանչյուր բնակչին բաժին է ընկնում 0.5, Ադրբեջանին՝ ընդամենը 0.25 (Հայաստանի ցուցանիշից կիսով չափ պակաս), Վրաստանին՝ 0.94 զբոսաշրջիկ: Կանխատեսվում է, որ մոտակա տարիներին Վրաստան կայցելի ավելի շատ զբոսաշրջիկ, քան նրա բնակչությունն է: Ըստ այս ցուցանիշի առավել լավ տվյալներ է գրանցել Վրաստանը, ապա Հայաստանը՝ իր բնակչության կիսովչափ, նոր միայն Ադրբեջանը՝ իր բնակչության քառորդ չափով:

Վերը նշված երեք երկրներում 2017 թ. մեկ բնակչի հաշվով՝ զբոսաշրջությունից ստացված եկամուտների հաշվարկները, ևս հետաքրքիր պատկեր են արտահայտում:



Գծապատկեր 4. Ջրուսաշրջությունից ստացած մուտքերը մեկ բնակչի հաշվով, դոլար

Գծապատկերի ուսումնասիրությունից տեսնում ենք, որ 2017 թ.-ին Հայաստանի յուրաքանչյուր բնակչի բաժին է ընկել ներգնազբոսաշրջությունից ստացված 383 դոլար մուտք, Ադրբեջանին՝ 304 դոլար, իսկ Վրաստանին՝ 740 դոլար: Այս երեք երկրներից ամենից շատ մուտք՝ մեկ շնչի հաշվով, ստացել է Վրաստանը, շուրջ կրկնակի անգամ ավելի, քան հարևան մյուս երկու երկրները: Ոչ շատ մեծ տարբերությամբ երկրորդ տեղում Հայաստանն է, նոր միայն՝ Ադրբեջանը:

Այսպիսով, ամփոփելով նշված վերլուծությունը՝ կարող ենք հստակորեն փաստել, որ տարածաշրջանի երեք երկրներում էլ՝ Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում զբոսաշրջությունը վերջին տարիներին գրանցել է կայուն զարգացման միտումներ: Նրանց ում մեծացել է զբոսաշրջիկների թիվ, ավելացել զբոսաշրջությունից ստացվող ֆինանսական մուտքերը: Թեև տարբեր վերլուծական ցուցանիշներով առաջնային դիրքերում, տարբեր տարիներին հանդես է եկել երեք երկրներից մեկը, օրինակ՝ մեկ զբոսաշրջիկի նվազագույն ծախսերի ծավալով առաջինն էր Հայաստանը, զբոսաշրջությունից ստացված ֆինանսական մուտքերի բացարձակ ծավալով՝ Ադրբեջանը, զբոսաշրջիկների թվով, մեկ բնակչին ընկնող զբոսաշրջիկների քանակով և մեկ բնակչին ընկնող զբոսաշրջությունից ստացվող մուտքերի ծավալով՝ Վրաստանը, այնուհանդերձ բոլոր վերոհիշյալ երկրներում զբոսաշրջության ոլորտում դրական տեղաշարժերը անհերքելի իրականություն են:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- [1] The Travel & Tourism Competitiveness Report 2017, 387 page, URL: http://ev.am/sites/default/files/WEF_TTCR_2017.pdf (Հղումը կատարվել է՝ 19.02.2019):
- [2] UNWTO Tourism Highlights 2018 Edition, 20 page, URL: <https://www.e-unwto.org/doi/pdf/10.18111/9789284419876> (Հղումը կատարվել է՝ 19.02.2019):
- [3] URL: <https://www.aravot.am/2019/03/28/1032147/> (Հղումը կատարվել է՝ 19.02.2019):
- [4] URL: <http://dspace.paara.am/xmlui/handle/123456789/118> (Հղումը կատարվել է՝ 19.02.2019):
- [5] URL: <https://168.am/2019/01/06/1064552.html> (Հղումը կատարվել է՝ 19.02.2019):

Հարությունյան Դիանա

ՀԱՅԱՍՏԱՆԻ, ԱՂԲԵՋԱՆԻ, ՎՐԱՍՏԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Բանալի բառեր՝ զբոսաշրջություն, տարածաշրջան, ֆինանսական մուտքեր, աճի տեմպեր, վիճակագրություն, մրցունակություն:

Հոդվածի նպատակն է համեմատական վերլուծության ենթարկել վերջին տարիներին դիտվող զբոսաշրջության զարգացման միտումները՝ Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում: Ուսումնասիրվել է այս երկրների միջազգային զբոսաշրջային ժամանումների թիվը, ստացվող ֆինանսական մուտքերը, մեկ բնակչի հաշվով զբոսաշրջային ժամանումների թիվը և ստացած ֆինանսական մուտքերը: Արդյունքում պարզվել է, որ տարածաշրջանի երեք երկրներում էլ զբոսաշրջությունը վերջին տարիներին գրանցել է կայուն զարգացման միտումներ: Այնուհանդերձ բոլոր վերոհիշյալ երկրներում զբոսաշրջության ոլորտում դրական տեղաշարժերը անհերքելի իրականություն են:

Арутюнян Диана

СРАВНИТЕЛЬНОЕ ИССЛЕДОВАНИЕ РАЗВИТИЯ ТУРИЗМА В АРМЕНИИ, АЗЕРБАЙДЖАНЕ И ГРУЗИИ

Ключевые слова: туризм, регион, финансовые поступления, темпы роста, статистика, конкурентоспособность.

Целью статьи является сравнительное исследование тенденций развития туризма в Армении, Азербайджане, Грузии за последние годы. Основная задача статьи изучить число международных туристских прибытий в эти страны, получаемые финансовые поступления, число туристских прибытий на одного жителя и полученные финансовые поступления: Мы пришли к выводу, что в трех странах нашего региона туризм имеет устойчивые тенденции развития в последние годы. Во всех вышеупомянутых странах позитивные изменения в туризме неоспоримы.

HarutyunyanDiana

COMPARATIVE STUDY OF TOURISM DEVELOPMENT IN ARMENIA, AZERBAIJAN AND GEORGIA

Keywords: tourism, region, financial income, growth rates, statistics, competitiveness.

The main purpose of the article is to conduct a comparative study of tourism development trends in Armenia, Azerbaijan, and Georgia in recent years. The main objective of the article is to study the number of international tourist arrivals in these countries, the received financial revenues, the number of tourist arrivals per resident and the received financial revenues. We have concluded that tourism in the three countries of our region has registered sustainable development trends in recent years. In all the above-mentioned countries, positive changes in tourism are undeniable.